# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 99 – Ա

24 փետրվարի 2021 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 15-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը՝

| | |
|---|---|
| Սանոսյան Գնել | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ |
| Մանուկյան Նարեկ | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ |
| Վարդանյան Լուսինե | - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար, քարտուղար |
| Ղազյան Կարեն | - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| Գալոյան Մամիկոն | - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ |

| | |
|---|---|
| Սաֆոյան Աննա | - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ |
| Բադոյան Արմեն | - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար |
| Բաղալյան Օքսեն | - ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ /համաձայնությամբ/»: |

24.02.2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ